ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ՏՆՏԵՍԱՀԱՇՎԱՐԿԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՆՎՈՐՆ.
ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏ. ՎԱՐՉ.

Երևան 1934

330.391
18 DEC 2017

ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ՏՆՏՀԱՇՎԱՐԿԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՆՎՈՐՆ. ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏ. ՎԱՐՉՈՒԹ.

Ցերեվան 1934

ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱՐ
1-3270 գր

Քանաքեռշինի տպարան Յերևան

Գլավլիտ 459 (բ). Տիրաժ 1300

ՎՈՐՈՇՈՒՄ

ԽՍՀՄ-ի ԺՏԳԽ-ի ՅԵՎ ՀԱՄԿԽ-ի

ՄՈՍԿՎԱ, 11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1931 Թ.

Մի շարք ձեռնարկների բանվորների նախաձեռնությամբ վերջին ժամանակներում առաջացավ սոցմրցման և հարվածայնության նոր ձևը—տնտհաշվարկային բրիգադաները։

Տնտհաշվարկային բրիգադաները ձեռք բերին կոնկրետ նվաճումներ արդֆինպլանի քանակական և վորակական ցուցանիշների կատարման և գերակատարման գործում և հանդիսանում են վորպես աշխատանքի ճիշտ կազմակերպման, ձեռնարկի աշխատանքի մեջ տնտհաշվարկի արմատացման, սոցմրցության հետագա զարգացման համար պայքարի ձևերից մեկը՝ աշխատանքի արտադրողականության բարձրացման մեջ բանվորների նյութական շահագրգռության աճման հիման վրա։

Յելնելով դրանից, ԽՍՀՄ-ի ԺՏԳԽ և ՀԱՄԿԽ-ը առաջարկում են բոլոր տնտեսավարաներին, վարչական-տեխնիկական կազմին և պրոֆեսիոնալ կազմակերպություններին, ամեն կերպ ոժանդակել և գլխավորել տնտհաշվարկային բրիգադների հետագա զարգացումը, վորի համար՝

1) Գործարանային և ցեխային ադմինիստրացիային ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմանները՝ բրիգադաները հաջողությամբ տնտհաշվարկի փոխադրելու համար։ Այդ նպատակով վերանայել բանվոր-

ների գոյություն ունեցող դասավորումը ըստ բրիգադների, տեխնոլոգիական պրոցեսին համապատասխանելու, սարքավորման շահագործման, գիմազրկության և աշխատանքի վարձատրության մեջ հավասարեցման վերացման տեսանկյունով, բրիգադներին վորոշ դաղդյահներին և ագրեգատներին ամրացնելու և աշխատանքի գործարքային վարձատրության անցնելու միջոցով։

Մեծամասնակ պայմաններ ստեղծել նյութերի, հումքի, եներգիայի, գործիքների խնայողության հաջող պայքարի համար, նրանց ճիշտ արժեքական հաշվեառման և չափավորման դրվածքի միջոցով, բանուժի աննպատակ ծախսումի վերացումով, ներցեխային պլանավորման և վերանորոգումների ճիշտ կազմակերպման միջոցով։

2) Տնտեսավարական բրիգադը ստանում է ցեխի վարիչից արտադրական առաջադրանք-նարյադ, վորի մեջ մատնանշվում են քանակական և վորակական ցուցանիշները, աշխատանքի արտադրողականության նորմաները, խոտանի (բրակ) և բրիգադից կախված վերադիր ծախքերի նորմաները (եներգիա, ամորտիզացիա, գործիքների և դաղդահների վերանորոգում և այլն) արժեքային և բնական արտահայտությամբ։

3) Նարյադի հիման վրա տնտեսավարական բրիգադը կնքում է ցեխի ադմինիստրացիայի հետ տնտեսավարական պայմանագիր, վորի մեջ մտցվում է՝

ա) Բրիգադի կողմից հանդիպական պլանի կարգով առաջադրվող քանակական ցուցանիշները, վերադիր ծախսերի նորմաները, նույնպես և բրիգադի պարտավորությունները աշխատանքի արտադրողականության բարձրացման, բրակի նվազեցման ու

վերացման, հիմնական և ոժանդակ նյութերի ծախսման խնայողության, պրոդուկտների և դադարների վերացման, աշխատանքը ավելի փոքր քանակությամբ բանվորներով կատարելու, նախապատրաստական աշխատանքի համար ժամանակի կրճատման, վորակի սիստեմատիկ բարելավման և արտադրանքի ինքնարժեքի իջեցման առթիվ։

բ) Ադմինիստրացիայի պարտավորությունը բրիգադին ժամանակին հումքով, նյութեղենով, գործիքներով մատակարարելու, սարքավորության ժամանակին վերանորոգման, ինքնարժեքի հաշվառման գործի կազմակերպման նկատմամբ և պարտավորությունը բրիգադին պարգևատրելու առթիվ վորակական ցուցանիշների նկատմամբ նվաճումների համար։

4) Պրեմիան վճարվում է ամեն ամսին և հաշվում է տնտեսումից, վորը ստացվում է բրիգադի կողմից ադմինիստրացիայից ստացած նարյադով տրված հումքի, նյութեղենի, գործիքների, բանվորական ուժի ծախսման նորմաների գերակատարման հետևանքով։ Պրեմիայի չափը (ստացած տնտեսման 20-ից մինչև 60%) պարզ մատնանշվում է պայմանագրում։

Պրեմիայի բաշխումը բրիգադներում կատարվում է հաշվի առնելով բրիգադի անդամների վորակը, յուրաքանչյուր մասնակցողի աշխատանքի վորակը և քանակը։ Բրիգադը կարող է զրկել այդ պրեմիայից լրիվ կամ մասնակի իրենց առանձին մասնակցողներին պրոդուկտների, խոտանի (բրակի), նյութերի գերածախսման և այլի համար, դրանով իսկ ոգտագործելով պարգևատրումը լավագույն հարվածային բանվորների խրախուսման համար։

5) Տնտեսավարական բրիգադը ստեղծվում է բանվորների, իրենց նախաձեռնությամբ, սակայն տղմինխուսաբացիայի անսպասման հաստատությամբ։ Վարչականորեն պատասխանատու անձնավորություն է հանդիսանում բրիգադի աշխատանքի համար—բրիգադիրը, որը նշանակվում է ցեխի վարիչի կողմից։

Բրիգադիրը չի ազատվում աշխատանքից արտադրության մեջ և բրիգադի աշխատանքը կազմակերպելու համար ստանում է լրացուցիչ վարձատրություն, աշխատավարձի 25 %-ի սահմաններում, ստանալով բացի դրանից պրեմիա ընդհանուր հիմունքներով ամբողջ բրիգադի հետ։

6) Տնտեսավարական և պրոֆեսիոնալ կազմակերպությունները պետք է վճռականորեն վերջ տան տեղի ունեցող այլասերումներին՝—բրիգադներին տնտհաշվարկի փոխադրելու գործում, ինչպես՝ նյութական տուգանքների սահմանման բանվորների կողմից, բրիգադներին տնտհաշվարկի փոխադրելու վարչական կարգով, ներքին կարգով, ներքին կարգապահության կանոնների խախտման, բրիգադին տրված նպատակի խախտման, տնտհաշվարկային բրիգադներին շրջանառության միջոցներ հատկացնելու և այլն։

ԺՏԳԽ և ՀԱՄԿԽ-ը հաշվի առնելով տնտհաշվարկային բրիգադների զարգացման կարեվորությունը արտադրության մեջ, աշխատանքի ճիշտ կազմակերպման, տնտեսավարական հաշվարկի արմատացման, և սոցմրցության հետագա ծավալման նպատակով, պահանջում են վարչական-տնտեսական կազմից և պրոֆեսիոնալ կազմակերպություններից մակսիմալ ուշադրություն դարձնել և մանրակրկիտորեն նախապատրաստվել բրիգադները տնտհաշվարկի փոխադրելու համար։

ԽՍՀՄ-ի ԺՏԳԽ-ի նախագահ՝ ՈՐՋՈՆԻԿԻՋԵ
ՀԱՄԿԽ-ի ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՇՎԵՐՆԻԿ

ՎՈՐՈՇՈՒՄ

ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԿՈԼԵԳԻԱՅԻ ՅԵՎ ՀԱՄԿԽ-ի

Տնտհաշվարկային բրիգադի մասին որինակելի կանոնադրության հաստատման առթիվ։

№ 526 Խմբագիր 021

ՄՈՍԿՎԱ, 10/27 ՀՈՒԼԻՍԻ 1932 Թ.

1) Հաստատել կանոնադրությունը տնտհաշվարկային բրիգադի մասին, որպես որինակելի (տես կցումը)։

2) Հանձնարարել գլխավոր վարչություններին համապատասխան Միությունների ԿԿ հետ մեկ ամսվա ընթացքում՝

ա) Հաստատված որինակելի կանոնադրության հիման վրա մշակել հրահանգներ՝ հարմարեցված արդյունաբերության յուրաքանչյուր ընագավառին։

բ) Սահմանել հարմարեցված արդյունաբերության յուրաքանչյուր ընագավառին այն շրջանները, որտեղ ըստ արդյունաբերության պայմանների չեն կարող մտցվել տնտհաշվարկային բրիգադներ։

Ի. տ. Ծանր Արդյունաբերության
Ժողկոմի՝ ԿԱԳԱՆՈՎԻՉ

ՀԱՄԿԽ-ի քարտուղար՝ ՎԵՑՆԲԵՐԳ

ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՏՆՏՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԲՐԻԳԱԴԻ ՄԱՍԻՆ

Ծանր Արդյունաբերության Ժողովրդական Կոմիսարիատը և Արհեստակցական Միությունների Կենտրոնական Խորհուրդը դնում են տնտեսավարական և արհեստակցական կազմակերպությունների առաջ, վորպես պայքարի կենտրոնական խնդիր՝ արտադրության կազմակերպման հետագա բարելավման և վորակական ցուցանիշների բարձրացման գործում սոցմրցության և հարվածայնության հիման վրա—տնտհաշվարկային բրիգադների ամրացումը, նրանց ճիշտ կազմակերպման ապահովումը համապատասխան տեխնոլոգիական պրոցեսին, տնտհաշվարկային բրիգադները օրինակելի սոցիալիստական աշխատանքի կազմակերպման բրիգադներ դարձնելու համար։

Դրա կապակցությամբ ԽՍՀՄ-ի ԺՏԳԽ-ի և ՀԱՄԿԽ-ի 1931 թ. սեպտեմբերի 11-ի վորոշման մեջ մատնանշված սկզբունքների հիման վրա, սահմանվում են հետևալ կանոնները՝ տնտհաշվարկային բրիգադների կազմակերպման և աշխատանքի առթիվ։

I. ԲՐԻԳԱԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1) Բրիգադի տնտհաշվարկի անցնելը կարող է լինել միայն կամավոր, բանվորների իրենց համաձայնությամբ, սակայն ադմինիստրացիայի անպայման հաստատությամբ։

Տնտհաշվարկային բրիգադներ կազմակերպելու նախաձեռնությունը կարող է պատկանել ինչպես բանվորներին, նույնպես և արհեստակցական կազմակերպություններին և ադմինիստրացիային։

Վոչ ուշ 10 որվա ընթացքում տնտհաշվարկի անցնելու մասին բրիգադի կողմից ցանկություն հայտնելու մոմենտից, ցեխային ադմինիստրացիան վորոշում է, տեխնոլոգիական պրոցեսի պայմանների տեսակետից, բրիգադի տնտհաշվարկի անցնելու հնարավորությունը և հարցի դրական լուծման դեպքում, նախապատրաստում է դրա համար անհրաժեշտ պայմաններ և ձևակերպում է բրիգադի տնտհաշվարկի փոխադրելը՝ կնքելով տնտհաշվարկային պայմանագիր։

2) Բրիգադի կառուցվածքը պետք է խիստ համապատասխանի և նպաստի արտադրության տեխնոլոգիական պրոցեսի ամենառացիոնալ կազմակերպմանը։

Տնտհաշվարկի կարող է փոխադրվել յուրաքանչյուր արտադրական բրիգադ, վորն ունի իրենից կախված ծախքերը (հումքի, հիմնական, ոժանդակ նյութերը և այլն) և վորը կարող է ազդել ինքնարժեքի իջեցման վրա։

3) Տնտհաշվարկային բրիգադի մասնակցողների քանակը վորոշվում է տվյալ արտադրական շրջանի տեխնոլոգիական պրոցեսի յուրահատկություններով։

Տնտհաշվարկային բրիգադի հիմնական ձևն է հանդիսանում սմենային բրիգադը։ Այն դեպքում, վորտեղ այդ պահանջվում է արտադրական պրոցեսի յուրահատկություններով և աշխատանքի սմենային հաշվառման անհնարինությամբ—կազմակերպվում են որեկան (սուտոչնի) բրիգադներ։

4) Ամեն ամիս, ամիսը սկսելուց հետո որ առաջ, ցեխի ադմինիստրացիան տալիս է բրիգադին նարյադ-առաջադրանք, վորի մեջ պետք է մատնանշված լինի՝

ա) Արտադրանքի քանակը բնական և արժեքային արտահայտությամբ, բ) արտադրանքի նորմաները, գ) գնահատությունը, դ) պահանջվող բանվորների քանակը, յե) հումքի, կիսաֆաբրիկատների, հիմնական և ոժանդակ նյութերի նորմաները, ե) գործիքների ծախսման նորմաները, զ) խոտանի (բրակի) նորմաները, ի) վառելիքի և էլեկտրոէներգիայի նորմաները, կ) բրիգադից կախված ծախքերի բրիգադային կալկուլացիան։

Նարյադ-առաջադրանքը պարտադիր է բրիգադի համար և առանց ծայրահեղ անհրաժեշտության չպետք է փոփոխվի ամբողջ ոպերացիոն շրջանում։

Նարյադ-առաջադրանքի հիմնական էլեմենտների փոփոխման դեպքում պետք է համապատասխան կարգով վերանայվեն տնտեսավարկային պայմանագրի պայմանները։ Արգելվում է նարյադ-առաջադրանքի մեջ մտցնել բրիգադից անկախ ծախքերը։

5) Նարյադ-առաջադրանքի հիման վրա տնտեսավարկային բրիգադը կնքում է տնտեսավարկային պայմանագիր ցեխային ադմինիստրացիայի հետ, որի գործողության ժամկետը սահմանվում է կախված արտադրության կոնկրետ պայմաններից (մեկ ամսվա, կվարտալի համար և այլն)։

Պայմանագիրը պետք է լինի մակսիմալ չափով կոնկրետ և հասկանալի բանվորների համար և լրիվ չափով արտահայտի յուրաքանչյուր շրջանի սպեցիֆիկ և արտադրական յուրահատկությունները։

6) Տնտեսավարկային պայմանագրում մտցվում են բրիգադի կոնկրետ թվանշանային ցուցանիշներով արտահայտված պարտավորությունները, նարյադ-պատվերի գերակատարման առթիվ հետևյալ բնագավառներում՝

ա) Աշխատանքային դիսցիպլինայի ամրացման և հոսունության վերացման, բ) աշխատանքի արտադրողականության բարձրացման, գ) ինքնարժեքի իջեցման, դ) արտադրանքի վորակի բարելավման, յե) սարքավորման և գործիքների նկատմամբ խնայողաբար վերաբերմունքի և լավագույն ոգտագործման, զ) բրիգադի մասնակցողների վորակի բարձրացման և տեխնիկական ուսուցման բնագավառում։

7) Ցեխի ադմինիստրացիայի կողմից տնտեսավարկային պայմանագրում մտցվում են կոնկրետ թվանշանային ցուցանիշներով արտահայտված պարտավորությունները։

ա) Բրիգադին հիմնական և ոժանդակ նյութերով, կիսաֆաբրիկատներով, գործիքներով մատակարարելու առթիվ, բ) սարքավորության ժամանակին վերանորոգման և գործիքների վերականգնեցման կազմակերպման (վերանորոգման ժամկետներ), գ) բրիգադի լրացման առթիվ, մինչև հաստիքով սահմանված աստիճանը այս կամ այն բանվորների հեռանալու դեպքում, դ) մինչև տնտեսավարկային բրիգադի նրա աշխատանքի արդյունքների ոպերատիվ հաշվառումը հասցնելու, յե) բրիգադի պարգևատրման առթիվ նրա աշխատանքում ձեռք բերած տնտեսումների համար, ցույց տալով պրեմիաի ձևերը և նրա վորոշման բաշխման կարգը և ժամկետները, ե) ադմինիստրացիայի կողմից ընդունված ռացիոնալիզատորական միջոցառումների և բանվորական առաջարկների կիրառման առթիվ, վորոնք ապահովում են բրիգադի նարյադ-առաջադրանքի կատարումը, ցույց տալով կատարման ճիշտ ժամկետը, զ) բրիգադի սիստեմատիկ տեխնիկական հրահանգումը կազմակերպման առթիվ։

8) Պայմանագիրը պետք է քննության առնվի բրիգադի կողմից, ստորագրվի ցեխի կամ բաժանմունքի վարիչի և տնտեսվարական բրիգադի բոլոր անդամների կողմից։

Տնտեսվարական պայմանագրի հիման վրա բրիգադը կազմակերպում է սոցմրցություն, վերցրած պարտականությունների լավագույն կատարման համար, ինչպես բրիգադի անդամների միջև, նույնպես և այլ տնտեսվարական բրիգադաների հետ, կնքելով նրանց հետ սոցիալիստական պայմանագրեր։

9) Բրիգադը կազմակերպում է կանոնավոր, վոչ պակաս ամիսը մեկ անգամ, տնտեսվարական պայմանագրով վերցրած պարտականությունների կատարման ընթացքում, հայտնաբերում է պարտականությունների խախտման կոնկրետ մեղավորներին և պատճառները ինչպես բրիգադի անդամների, նույնպես և ադմինիստրացիայի կողմից, ազդեցության միջոցներ է ձեռք առնում բրիգադի առանձին անդամների նկատմամբ, վորոնք խախտել են պարտավորությունները (պրեմիայից զրկելը, ընկերական դատարաններ և այլն)։

10) Բրիգադիրը վարպետի (բաժանմունքի պետի և այլն) ընդհանուր ղեկավարությամբ հանդիսանում է աշխատանքի և արտադրության կազմակերպիչը բրիգադում և պատասխանատու է ցեխային ադմինիստրացիայի առաջ՝ բրիգադի ամբողջ գործունեության և բոլոր վորակական և քանակական ցուցանիշների ժամանակին կատարման համար՝ ըստ նարյադ-առաջադրանքի։

11) Բրիգադային ղեկավարելը չի ազատում բրիգադիրին նրա վրա յեղած արտադրական առաջադրանքների կատարումից։

12) Բրիգադայի ղեկավարության համար բրիգադիրին նշանակվում է լրացուցիչ վարձատրություն յուրաքանչյուր առանձին դեպքում բրիգադիրի հիմնական աշխատավարձի 10-ից մինչև 25 տոկոսի չափով, կախված նրա վրա դրած նոր պարտականությունների ծավալից, կապված բրիգադի տնտեսվարկի անցնելու հետ, բրիգադի կողմից կատարած աշխատանքի բարդությունից, նրա անդամների թվից, բրիգադի պարտականությունները կատարելու համար պահանջված ժամանակից։

Լրացուցիչ վարձատրությունը պետք է վորոշել տոկոսային հարաբերությամբ, բրիգադիրի հիմնական արտադրական աշխատանքի համար՝ հիմնական աշխատավարձից։

Լրացուցիչ վարձատրության վճարումը կատարվում է տնտմարմինների միջոցներից ցեխային վարձատրության ֆոնդերի հաշվին։ Պրեմիա եկոնոմիայի համար բրիգադիրը ստանում է ամբողջ բրիգադի հետ ընդհանուր հիմունքներով։

13) Բրիգադի բոլոր մասնակցողները յենթարկվում են բրիգադիրին և նրա կարգադրությունները պարտադիր են (բրիգադիրի կարգադրությունները կարող են վերացվել միայն վերադաս ադմինիստրացիայի կողմից)։

Բրիգադիրը մասնակցում է վարպետի, բաժանմունքի վարիչի և այլնի կողմից աշխատանքը բրիգադի ներսում դասավորելու մեջ և վերահսկում է յուրաքանչյուր բանվորի առաջադրանքի կատարման, աշխատանքի վորակի վրա։

14) Փոփոխությունները բրիգադի անձնական կազմի մեջ (փոխադրություններ—արձակուրդներ,

առաջքաշում, կատեգորիայի բարձրացում և այլն) պետք է կատարվեն բրիգադիրի գիտությամբ։

15) Բրիգադիրը կրում է պատասխանատվություն բրիգադի մեջ աշխատանքի դիսցիպլինայի համար և հարց է դնում ցեխային ադմինիստրացիայի առաջ՝ բոլոր խախտողների մասին տույժ նշանակելու համար, համաձայն ներքին կարգապահության կանոնների։

16. Բրիգադիրին իրավունք է վերապահվում անցկացնել բրիգադի ներսում համագործարանային ԲՐԻԶ-ի կողմից հավանություն ստացած և ցեխի պետի կողմից թույլատրված ռացիոնալիզատորական և գյուտարարական առաջարկները, ինչպես ծախս չպահանջող բնույթի, նույնպես և այնպիսիները, որոնց կիրառման համար ծախքը չի գերազանցում 50 ռուբլուց։

II. ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՏՆՏՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԲՐԻԳԱԴՆԵՐՈՒՄ

17) Տնտհաշվարկային բրիգադներին մասնակցողները մասնակցում են ներցեխային պլանավորման մեջ՝ ցեխի արտադրական խորհրդակցությունների և պլանային ոպերատիվ խմբերի միջոցով։

Բրիգադի հանդիպական պլանների մշակումը կատարվում է արտադրական խորհրդակցությունների միջոցով և իրագործվում է հասարակական պլանավիկի կողմից։

Սմենային—արտադրական խորհրդակցությունում բրիգադը քննության է առնում անցած սմենայի աշխատանքի արդյունքները և բացերը, ծանոթանում է ադմինիստրացիայի կողմից սմենայի համար տված առաջադրանքի հետ և առաջադրում է իր հանդիպական պլանը։

III. ՀԱՇՎԱՌՈՒՄ

18) Հաշվառումը տնտհաշվարկային բրիգադներում պետք է լինի հասարակ և պարզ և ընդգրկի բրիգադի արտադրական գործունեությունը։

Հաշվառումը պետք է կառուցված լինի միասնական համագործարանային սկզբնական դոկումենտացիայի հիման վրա։

Հաշվառումը տնտհաշվարկային բրիգադներում պետք է ընդգրկի՝ ա) աշխատանքի արտադրողականությունը, բ) ծախքերը և տնտեսումը, գ) կորուստները և աննպատակ ծախքերը, դ) աշխատանքի արդյունքների համեմատումը առաջադրանքի և հանդիպական պլանի հետ՝ ըստ բոլոր ցուցանիշների։

IV. ՏՆՏՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

19) Տնտհաշվարկային բրիգադը պարգևատրվում է նրա արտադրական գործունեության ընթացքում ձեռք բերած տնտեսումների համար։

20) Բրիգադի կողմից ձեռք բերած տնտեսումը հաշվում է ըստ ներքոհիշյալ ցուցանիշների՝

ա) ըստ արտադրանքի վորակի, բ) հումքի ծախսման, գ) ըստ ոժանդակ նյութերի և գործիքների, դ) բրիգադից կախված ընթացիք վերանորոգումների և դադարների, ե) ըստ վառելիքի և էլեկտրական էներգիայի ծախսման, զ) ըստ բանվորների քանակի և այլ ցուցանիշների, վորոնք անմիջականորեն կախված են բրիգադից։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ցուցանիշների ցուցակը սահմանվում է, կախված յուրաքանչյուր բրիգադի կոնկրետ արտադրական պայմաններից։

21) Բրիգադի կողմից ձեռք բերած տնտեսումը վորոշվում է բրիգադի փաստական ծախքերը նարյադ-առաջադրանքով, սահմանված նորմաների հետ համեմատելու միջոցով։

22) Բրիգադի տնտեսումի հաշվարկումը և պրեմիայի բաշխումը բրիգադին կատարվում է ամեն ամիս, ընդ վորում պրեմիան պետք է տրվի ամիսը մեկ անգամ, աշխատավարձի բաշխման հետ միասին։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գործիքների ընթացիկ վերանորոգման, ծախքերի պակասեցման աոթիվ տնտեսումի և պրեմիայի վորոշումը կարող է կատարվել մեկ անգամ կվարտալի ընթացքում։

23) Յեթե բրիգադում անցյալ ամսվա ընթացքում ըստ մեկ ցուցանիշների յեղել է տնտեսում, իսկ ուրիշներով գերածախս, այդ դեպքում բրիգադի աշխատանքի վերջնական արդյունքները, վորը հիմնական է հանդիսանում պարգեվատրման համար, վորոշվում է վորպես տարբերություն տնտեսման և գերածախսի գումարների միջև։

Այն դեպքում, յերբ գերածախսերի և կորուստների գումարը ըստ առանձին ցուցանիշների գերազանցում է տնտեսման գումարին ըստ այլ ցուցանիշների—պրեմիա չի տրվում։

24) Բանվորների աշխատավարձից պահումներ կատարել գերածախսերը ծածկելու համար չի թույլատրվում, նույնպես չի թույլատրվում բրիգադներին հասանելիք պրեմիայի գումարներից հատուկ ֆոնդ առեղծել՝ գալիք ամիսների ընթացքում հնարավոր գերածախսերը ծածկելու համար։

25) Այն դեպքում, յերբ բրիգադը ընկնելով եկոնոմիայի հետևից վատացնում է արտադրանքի վորակը,

1-3270

կամ սարքավորության դրությունը, նա բացի պատասխանատվության՝ համաձայն հավաքական պայմանագրի, զրկվում է պրեմիա ստանալու իրավունքից տվյալ ամսվա ընթացքում։

26) Տնտեսման համար պրեմիայի տոկոսի վորոշման պարզ ձև սահմանելու նպատակով, ադմինիստրացիայի կողմից գործարկոմի համաձայնությամբ սահմանվում է պարգևատրման ամուր աստիճանացույց (շկալա), վորը կառուցվում է հետևյալ սկզբունքներով՝

ա) պրեմիայի գումարը հաշվում է բրիգադի եկոնոմիայի ընդհանուր գումարից, բ) հատուկ դեֆիցիտային նյութերի խնայողության համար պայքարի շահագրգռության նպատակով ադմինիստրացիան կարող է սահմանել ըստ այդ ցուցանիշների պրեմիայի մաքսիմալ չափեր, գ) պրեմիայի տոկոսի չափը վորոշվում է, կախված տնտեսման ընդհանուր գումարից, հաշվի առնելով արտադրական ծրագրի կատարումը։

Պարգևատրումը կատարվում է ձեռք բերած տնտեսումի 20-ից մինչև 60%-ի չափով։

Եկոնոմիայի աճման մեջ բրիգադիրներին շահագրգռելու նպատակով պրեմիայի տոկոսը պետք է պրոգրեսիվ աճի, կախված այդ տնտեսումի աճումից։ Պրեմիան վճարվում է լրիվ չափով, պարգևատրման աստիճանացույցով սահմանված, բրիգադի կողմից արտադրական առաջադրանքը հարյուր տոկոսով կատարելու դեպքում։

Բրիգադայի կողմից, իր մեղքով, արտադրական առաջադրանքը չկատարելու դեպքում, պրեմիայի չափը համապատասխանորեն պակասեցվում է, կամ կախված հասցրած արտադրական պլանի կատարումից, պրեմիան կարող է չտրվել։

27) Պրեմիայի բաշխումը բրիգադի անդամների մեջ կատարվում է բրիգադայի կողմից ըստ բրիգադի նախնական նամետակայի, ձեռք բերած արդյունքների և յուրաքանչյուր բանվորի վորակի համաչափ։ Բրիգադը կարող է զրկել պրեմիայից մասնակի, կամ լրիվ բրիգադի առանձին անդամներին՝ պրոդուլների, բրակի, նյութերի գերածախսման և այլի համար, դրանով իսկ օգտագործելով պարգևատրումը լավագույն հարվածային աշխատողներին խրախուսելու համար։

V. ՏՆՏՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

28) Տնտհաշվարկային բրիգադների հաջող աշխատանքը ապահովելու համար տնտմարմինները իրագործելով տնտհաշվարկային բրիգադների վարչատնտեսական ղեկավարությունը, պարտավոր են ստեղծել բոլոր անհրաժեշտ արտադրական և կազմակերպչական-տեխնիկական պայմանները, վորոնք նպաստում են տնտհաշվարկային բրիգադների ճիշտ կազմակերպմանը (բանվորի ըստ բրիգադների դասավորման վերանայումը, այդ դասավորումը տեխնոլոգիական պրոցեսին համապատասխանելու տեսանյուկունով) բրիգադի աշխատանքի արտադրողականության բարձրացման (սարքավորման, գործիքների դիմադրկության վերացում, բրակի, վարձատրության մեջ հավասարեցման վերացումը, գործարքի և արտադրանքի անհատական հաշվառման հիման վրա)։

29) Պրոֆկազմակերպությունները, իրագործելով տնտհաշվարկային բրիգադների ղեկավարությունը պրոֆմիութենական գծով, ցեխային կոմիտեների, պրոֆմարմինների բրիգադների և արտադրական խորհրդակցությունների միջոցով, պարտավոր են ծավալել

մասսայական բացատրական աշխատանք բանվորների մեջ՝ տնտհաշվարկային բրիգադների խնդիրների և նրանց կազմակերպման ձևերի մասին, կազմակերպելով բրիգադներում, ուր կան 10—15 վոչ պակաս բանվորներ, պրոֆխմբակ, դնելով նրա ուշադրության կենտրոնում սոցիալիստական մրցության ծավալումը բրիգադի անդամների և այլ բրիգադների միջև, պայմանագրով վերցրած պարտականությունների լավագույն կատարման համար, փոխադարձ ոգնության և ինքնաստուգման կազմակերպումը ինչպես բրիգադի ներսում, նույնպես և իրենց ցեխի հետ մնացող բրիգադների նկատմամբ։

ՎՈՐՈՇՈՒՄ

ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՅԵՎ ԱՐԴԵՆԱԿԿՈՄՇԻՆԱՐԱՐԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ Կ. Կ.

№ 714 Ինդեկս 610

ՄՈՍԿՎԱ, 9 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1932 Թ.

Տնտհաշվարկային բրիգադների մասին որինակելի կանոնադրության գործադրության մասին շինարարության մեջ

1) Ի զարգացումն ԾԱԺԿ և ՀԱՄԿԽ-ի կողմից տնտհաշվարկային բրիգադի մասին որինակելի կանոնադրության (հրապարակված է «Զա Ինդուստրիալիզացիա» թերթում № 182 8/VIII 1932 թ.) կցված հրահանգը այդ կանոնադրությունը շինարարության մեջ մացնելու առթիվ—հաստատել։

2) Բոլոր շինմիավորումներին, տրեստներին, դրասենյակներին, առանձին կառուցումների և Արդ-

բնակկոմշինարարության Միության պրոֆմարմիններին ապահովել բրիգադային տնտեսաշվարկի մասին կանոնադրության և սույն հրահանգի կիրառումը կյանքի մեջ։

Ծանր Արդյունաբերության Ժողկոմատի
տեղակալ՝ ԿԱԳԱՆՈՎԻՉ

Արդբնակկոմշինարարության Միության
Կ. Կ. նախագահ՝ ՐՅԱԲՈՎ

ՀՐԱՀԱՆԳ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՏՆՏԵՍԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Շինարարական արդյունաբերության մեջ ռուբլու կոնարոլը, տեմպերի ավելացումը, շինարարության արժեքի եժանացումը և բանվորական խմբերի շահագրգռությունը, նյութերի տնտեսավարական-խնայողական ծախսման մեջ իրականացնելու նպատակով, բրիգադների փոխադրումը տնտեսաշվարկի կատարվում է հետևյալ հիմունքներով։

1) Տնտեսաշվարկի անցնելու մասին բրիգադի կողմից ցանկություն հայտնելուց վոչ ուշ 10 որվա ընթացքում, ադմինիստրացիան վորոշում է տեխնոլոգիական պրոցեսի պայմանների տեսանկյունից բրիգադին տնտեսաշվարկի փոխադրելու հնարավորությունը և հարցի դրական լուծում ստանալու դեպքում նախապատրաստում է անհրաժեշտ բոլոր պայմանները, դրա համար և ձեվակերպում է բրիգադներին տնտեսաշվարկի փոխադրելը՝ տնտեսաշվարկային պայմանագրիր կնքելու միջոցով։

2) Բրիգադների աշխատանքները լավագույն կերպով կազմակերպելու, նրա կազմի համապատասխան ընտրության և ուժերի ճիշտ դասավորման համար նրա ներսում բրիգադների կոմպլեկտավորման ժամանակ, ձգտել, վորպես կանոն, կազմակերպել բրիգադներ՝ կազմով 15-20 հոգի և վոչ մի դեպքում թույլ չտալ նրանց կազմակերպումը 30 հոգուց ավել։

3) Տնտեսաշվարկի փոխադրվում են միայն արտադրական բրիգադները և առանձին ողակները, վորոնք ունեն իրենցից կախված ծախքեր և վորոնք կարող են ազդել շինարարության արժեքի իջեցման վրա։

4) Տնտեսաշվարկային պայմանագիր աշխողեկի և բրիգադի միջև կնքվում է մեկ ամսից մինչև յերկու ամիս ժամանակով։

5) Տնտեսաշվարկի անցնող բրիգադների կազմակերպումը խոշոր կառուցումներում պետք է ընթանա առանձին աշխատանքների կատարման մասնագիտացման գծով, որինակ՝ հատակներ խփող հյուսներ, տանիք հավաքողներ և այլն։

6) Տնտեսաշվարկի անցած բրիգադի փոխադրումը մի այլ աշխատանքի, թեկուզ և իրենց մասնագիտությամբ, առ ավել իրենց մասնագիտության չհամապատասխանող աշխատանքի, մինչև առաջադրանքի կատարման վերջը, վորպես կանոն չի թույլատրվում։

7) Տնտեսաշվարկի փոխադրվող բրիգադը, վորպես կանոն, կազմակերպվում է մեկ արհեստի բանվորներից, սակայն կարող է իր մեջ ընդգրկել այլ արհեստի

բանվորների, վորոնք պահանջվում են վորոշ տեսակի աշխատանքներ կատարելու համար։

8) Շինանյութերի ծախսման գործում խիստ պատասխանատվություն և հաշվառում սահմանելու, մնտհաշվարկի անցած բրիգադի եկոնոմիայի արդյունքները ճիշտ և ժամանակին հայտնաբերելու նպատակով՝ տանել շինանյութերի մուտքի և ծախսի հաշվառում, դնելով այդ հաշվառումը շրջանին կամ ցեխին կից։

9) Բրիգադի տնտհաշվարկի անցնելը ձեվակերպելուց հետո, նուլնպես և աշխատանքի ընթացքում, ադմինիստրացիան պարտավոր է վոչ ուշ, աշխատանքի անցնելուց մեկ որ առաջ հանձնել բրիգադին նարյադ-պատվեր (առաջադրանք)։ Բրիգադի կողմից նարյադ-առաջադրանք չստանալու դեպքում չի թույլատրվում անցնել աշխատանքի և պատասխանատվությունը դադարի համար դրվում է ադմինիստրացիայի վրա։

10) Նարյադ-առաջադրանքը պետք է պարունակի՝

ա) Աշխատանքների տեխնիկական նկարագրությունը և նրանց կատարման ձեվերը։

բ) Սահմանված մարդ-որերի քանակը տվյալ աշխատանքը կատարելու համար (ըստ արտադրանքի նորմաների)։

գ) Աշխատանքի միավորի գինը, առանձին ըստ կլեմենտների (որինակ՝ շարվածք, մոտեցում, գարցովկա և այլն)։

դ) Ընդհանուր նորմա ամբողջ բրիգադի համար (աշխատանքի քանակը)։

յե) Աշխատանքի արժեքի ընդհանուր գումարը։

զ) Հասնելիք շինանյութերի քանակը ըստ նոր մասերի, առանձին—ցեմենտ, անտառանյութ, մեխ, աղյուս, կիր և այլն։

ե) Յուրաքանչյուր շինանյութի արժեքը առանձին։

ը) Աշխատանքը սկսելու և վերջացնելու ժամկետը։

Նարյադ-առաջադրանքը պետք է ունենա նաև ուունյակներ ըստ հիմնական յուցանիշների՝ բրիգադի կողմից առաջադրվող հանդիպականները լրացնելու համար, վորոնք մտցվում են տնտհաշվարկային պայմանագրի մեջ։

11) Արտադրական տեխնինֆինպլանը աշխատավարի կողմից տրվում է բրիգադին վոչ պակաս մեկ ամիս ժամանակով. արտադրական առաջադրանքը (նարյադ) տրվում է բրիգադին (ողակի) վոչ պակաս 5 որ և վոչ ավել 10 որ ժամանակվա համար։

12) Առաջադրանքը հանձնելուց հետո, սակայն մինչև աշխատանքի անցնելը, շրջանի արտադրական—մասսայական սեկտորը մշակում է բոլոր բրիգադների հետ արտադրական առաջադրանքի քարտը, հայտնաբերում է հանդիպական պլանը, անելով այդ մասին նշանառում արտադրական առաջադրանքի քարտում։

13) Արտադրական առաջադրանքների հանձնելուց հետո աշխատավարը իրավունք չունի փոխադրել բանվորներին այլ աշխատանքի, մինչև հանձնած աշխատանքի վերջացնելը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Աշխատավարը կարող է ունենալ փոքր հերթապահ բրիգադ՝ զանազան վորակների փոքր հաշվառման չենթարկվող աշխատանքների համար։

14) Նարյադ-առաջադրանքը կատարելուց հետո, նոր նարյադ-առաջադրանքով աշխատանք սկսելուց իսկույն և յեթ կատարվում է ավարտած աշխատանքի ընդունելությունը բրիգադներից և ոդակներից ու ավարտվում վոչ ուշ յերկու որվա ընթացքում։ Չափումից ստացած աշխատանքների ֆիզիկական ծավալը և նրանց արժեքը գրանցվում են նարյադ-առաջադրանքի մեջ։

15) Նարյադ-առաջադրանք կազմելիս լրացվում է նաև շինանյութերի պահանջագիրը յերկու որինակից, մատնանշելով նյութերի նորման նախընթաց աշխատանքից մնացած նյութերի քանակը յեվ մնացորդը։

16) Նարյադ-առաջադրանքը պահանջագրի հետ միասին (անբաժան) բրիգադիրը ներկայացնում է պահեստին, նյութերը բաց են թողնում բրիգադիրին պահանջագրում մատնանշված քանակով, դուրս գալով բրիգադիրի մոտ նախորդ առաջադրանքից ունեցած մնացորդը։

17) Բաց թողված նյութերի մասին նշանակվում է պահանջագրի իսկական որինակի վրա, վորը անբաժան է նարյադ-պահանջագրից, պահանջագրի պատճենը մնում է պահեստում։

18) Բրիգադը այլ աշխատանքի անցնելու ժամանակ, կամ ամիսը վերջանալու դեպքում կատարում է նյութերի մնացորդների ճիշտ հաշվառում։ Նույն կարգով հաշվի է առնվում և մուտք է գրվում պահեստում ուպալուբկանները և խարաջունները քանդելուց ստացած նյութերը։

տանքները բրիգադի կողմից ավարտելուց հետո, ընդունողը (պրյոմշչիկը) նշանակում է քարտում ինչպես տվյալ աշխատանքի համար փաստորեն ծախսած նյութերի քանակը, նույնպես և ձեռք բերած մնտեսման, կամ կատարած գերածախսի մասին, իսկ ամսի վերջում կազմում է սվոդկա բրիգադի կողմից, ամբողջ ամսվա ընթացքում տված մնտեսման մասին և վորոշում է նյութերի մնտեսման համար պրեմիայի գումարը՝ հետևյալ աստիճանացույցի։

20) Մնտեսավարկային բրիգադների պարգևավարումը շինանյութերի մնտեսման համար և պարգևավարման %-ը ստացած մնտեսման գումարից կատարվում է հետևյալ աստիճանացույցով՝

Մնտեսման գումարը ռուբլիներով	Սուր դեֆիցիտային նյութերի վարձատրման տոկոսը	Դեֆիցիտային նյութերի կարգաորման տոկոսը	Վոչ դեֆիցիտային նյութերի վարձատրման տոկոսը
100	40	30	20
200	42	31	21
300	44	32	22
400	45	33	23
500	48	35	25
600	50	37	27
700	52	39	29
800	54	41	31
900	57	43	33
1000	60	45	35

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—1) Սուր դեֆիցիտային նյութեր համարվում են՝ մետաղը, ներկերը, յուղը մեխը։

Դեֆիցիտային—ցեմենտ, անտառանյութ, ապակի, կիր, ալիբաստր, ֆաներա, տոլ, ռուբերոյիդ։

Վոչ դեֆիցիտային—գրավիչ, ավագ, քար և տեղական էներգետ նյութերը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—2) Բրիգադի կողմից իր մեղքով արտադրական առաջադրանքը չկատարելու դեպքում սահմանված պրեմիայի չափը համապատասխան չափով պակասեցվում է։ Կախված հասցրած արտադրական ջնջից, պրեմիան կարող է չտրվել (կանոնադրությունից)։

Ցելնելով տեղական պայմաններից, առանձին տեսակի նյութերը լրացուցիչ կերպով կարող են դասվել դեֆիցիտային նյութերի ցուցակում։

21) 1000 ռուբլուց ավել տնտեսում ունենալու դեպքում հաշվարկման տոկոսը սահմանվում է, վորպես 1000 ռուբլուց, իսկ 100 ռուբլուց պակաս լինելու դեպքում, վորպես 100 ռուբլուց համապատասխան կատեգորիայի շինանյութերի համար։

22) Պրեմիան բրիգադի մասնակցողների մեջ նախատեսվում և բաշխվում է բրիգադիրի (հրահանգչի) կողմից պրոֆկազմակերպիչի մասնակցությամբ բրիգադի արտադրական խորհրդակցությունում, համապատասխան յուրաքանչյուր բանվորի մասնակցության ստուգանին նյութերի խնայման մեջ, անկախ տարիֆային կարգերից, կամ աշխատավարձի գումարից։

23) Բրիգադների պարգևատրումը շինանյութերի տնտեսման համար կատարվում է միմիայն տնտեսման գումարներից և վոչ թե այլ միջոցների հաշվին։

24) Պրեմիան շինանյութերի տնտեսման համար բրիգադին տրվում է ամիսը մեկ անգամ, նախորդ ամսվա վերջնական աշխատավարձի բաշխման ժամանակ, անկախ նարյադ-առաջադրանքի կատարման ժամկետից։

25) Գոյություն ունեցող միասնական նորմաների

և գնացուցակների հիման վրա, վորոշ տեսակի աշխատանքի համար ըստ նարյադ-առաջադրանքի սահմանված արժեքը վոչ մի դեպքում չի կարող փոփոխության յենթարկվել բրիգադի կողմից աշխատանքը ավարտելու հետևանքով, անկախ այդ աշխատանքում ավել կամ պակաս աշխատած մարդ-օրերի քանակից, վորը ընդունված է յեղել նարյադ-առաջադրանքով և արտադրանքի նորմաները նման դեպքերում կարող են վերանայվել միայն սահմանված կարգով, կամ բրիգադի կողմից առաջադրած հանդիպականների կարգով։

26) Բրիգադի կազմի փոփոխության դեպքում, այսինքն բրիգադի մեջ նոր բանվորներ ընդունելու միջոցով լրացնելու ժամանակ, վորոնք առաջ չեն մասնակցել տնտսպայմանագրով վերցրած պարտականությունները հաստատելու մեջ, մինչև աշխատանքի անցնելը նրանք պետք է ծանոթացվեն բրիգադիրի միջոցով, բրիգադի կողմից վերցրած պարտականությունների հետ և ստացվի նրանց համաձայնությունը՝ պարտականությունները հանձն առնելու առթիվ։

27) Բրիգադի կազմը թարմացնելու ժամանակ, միաժամանակ ընդունվող բանվորներով 50%-ից ավել տնտ. պայմանագրի և նարյադի նախնական պայմանները պետք է հաստատվեն բրիգադի ընդհանուր ժողովում։

28) Տնտպայմանագրի (վերցրած պարտավորությունների) կատարման ստուգումը կատարվում է ամիսը յերկու անգամ, քննության առնելով ստուգման արդյունքները բրիգադի ժողովում, պայմանագիրը ստորագրող ադմինիստրացիայի կամ անտ. պայմանագրի կատարման առթիվ ծագող հարցերը լուծելու հա-

մաբ լիազորված անձնավորության և ցեխկոմի կամ բանկոմի ներկայացուցչի անպայման մասնակցությամբ։

29) Տնտպայմանագրի կատարման հողի վրա ադմինիստրացիայի և բրիգադի միջև ծագող բոլոր կոնֆլիկտները լուծվում են վերադաս ադմինիստրացիայի կողմից, պրոֆմիությունների հետ միասին։

ՈՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՏՆՏՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԲՐԻԳԱԴԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սույն պայմանագիրը կնքվում է ..... կառուցման աշխատանքի ղեկավար, հանձինս աշխղեկ ընկ՝ ..... մեկ կողմից և բրիգադի միջև միուս կողմից (ցույց տալով վորմնադիրների, բետոնշչիկների, հյուսների, արմատուրշչիկների, հողափորների և այլն) թվով ..... հոգի։

..... կառուցման աշխղեկը հանձնում է կատարելու կառուցման ընդհանուր շինֆինպլանի առանձին մասը (ցույց տալ ինչպիսի աշխատանքներ), իսկ բրիգադը ..... ընդունում է կատարելու համաձայն շինֆինպլանի, նարյադ—առաջադրանքը տնտհաշվարկի պայմաններով և սահմանում են իրար մեջ հետևյալ յերկկողմանի պարտավորությունները՝

1) Բրիգադը պարտավորվում է կատարել նարյադ-առաջադրանքի համաձայն, հանձնարարած աշխատանքը բոլոր քանակական և վորակական ցուցանիշներով՝ նարյադ-առաջադրանքում մատնանշած հանդիպական ժամկետներին և հանձնել այդ միանգամայն պատշաճ վորակի և համաձայն տեխնիկական

պայմանների պահանջների կրում է լրիվ պատասխանատվություն խոտանի (բրակի) և անվորակ աշխատանքների համար։

2) Բրիգադը պարտավոր է մակսիմալ չափով կրճատել շինանյութերի ծախսումը և ամեն կերպ ոգտագործել ունեցած պիտանի նյութը աշխատանքներում, չկատարել աննպատակ կտրատումներ, թափումներ և այլն՝ 100 տոկոսով ոգտագործելով նյութերի բոլոր մնացորդները։

3) Բրիգադը պարտավոր է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը ծախսել ըստ աշխատանքի յուրաքանչյուր միավորի համար սահմանված նորմաների, համաձայն նարյադ-առաջադրանքի։

4) Բրիգադը ստանում է անհրաժեշտ նյութը ըստ նարյադ-առաջադրանքի պահանջագրերի, ընդվորում նյութերը աշխատանքի վայրը ժամանակին բերելու պարտականությունը ընկնում է աշխղեկի վրա։

5) Բրիգադը պարտավոր է խնայողաբար և կանոնավոր վարվել ստացած գործիքների և սարքավորումների հետ (գործիքների ցուցակը կցվում է պայմանագրին)։ Աշխատանքը ավարտելուց հետո բոլոր գործիքները և սարքավորությունները հանձնվում են պահեստին։

6) Բրիգադը պարտավոր է ժամանակին հանձնել արհեստանոցին վերանորոգելու համար փչացած գործիքները և սարքավորությունը։ Գործիքները կոտրելու և փչացնելու դեպքում բրիգադը պարտավոր է այդ մասին հայտնել տասնապետին՝ համապատասխան արձանագրություն կազմելու համար։

7) Բրիգադը պարտավոր է իր խմբակային ար-

տադրական խորհրդակցությունների և Բ. Ր. Ի. Զ. (գյուտ բյուրո) միջոցով տալ առաջարկություններ, որոնք բարելավելու և եժանացնելու յուն շինարարության ձևերը, իսկ աշխատեկավարը պարտավորվում է կատարել ընդունված առաջարկները, հաշվի առնելով դրա հետևանքով ստացած տնտեսումը և պարգևատրել նախաձեռնողներին, սահմանված ժամկետներին ըստ արտադրական խորհրդակցությունների և գյուտ-բյուրոների կանոնադրության, համաձայն գոյություն ունեցող կանոնների։

8) Նարյադ-պատվերով սահմանված արտադրանքի նորմաները բրիգադի կողմից չկատարելը պետք է անմիջականորեն փոխադրվի բրիգադի ժողովին քննության առնելու համար և հայտնվի կառուցման հասարակայնության՝ պատճառների հայտնաբերման և վերացման նպատակով։

9) Բրիգադը պարտավոր է անմիջապես հայտնել տասնապետին կամ տեխնիկին բոլոր առաջացած աննորմալությունների մասին, որոնք ազդում են բրիգադի աշխատանքի նորմալ ընթացքի վրա՝ նրանց վերացման համար համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար։

10) Բրիգադը պարտավոր է սիստեմատիկ պայքար մղել բրիգադում աշխատասիրությունն ուժեղացնելու համար, հասարակական ազդեցության, աշխատանքի դիսցիպլինան խախտող բրիգադի առանձին անդամներին պրեմիայից զրկելու միջոցով։

11) Բրիգադը իր վրա պարտավորություն է վերցնում ամրանալ կառուցմանը մինչև նրա ավարտելը։

12) Բրիգադը պարտավորվում է բարձրացնել իր բրիգադի անդամների վորակը, իսկ ադմինիստրացիան իր վրա պարտավորություններ է վերցնում ապահովել բրիգադի անդամներին տեխ. ուսուցմամբ, ղեկավարությունը, ապահովել ուս. պիտույքներով, սարքավորումով և այլ ձեռնարկումներով, որոնք կապված են վորակի բարձրացման հետ։

13) Աշխատանքի ղեկավարը իր կողմից պարտավոր է, յերբեք որ առաջ մինչև աշխատանքի անցնելը ներկայացնել բրիգադին աշխատանքի ամսեկան արտադրական շինֆինպլանը բոլոր տեխնիկական ցուցումունքներով, նրա առանձին մասերի կատարման ժամկետներով, քանակական և վորակական ցուցանիշներով։

14) Աշխատանքի ղեկավարը պարտավոր է մեկ որ առաջ տալ բրիգադին նարյադ-առաջադրանք և ապահովել նրան բոլոր անհրաժեշտ արտադրական սարքավորումներով (թվել ինչ տեսակի և նրանց քանակը), ապահովել նրանց պահպանումը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Վոչ պակաս 10 որը մեկ անգամ ստուգել բոլոր սարքավորությունները շենքի վրա և միջոցներ ձեռք առնել հայտնաբերած թերությունները 24 ժամվա ընթացքում վերացնելու համար։ Բրիգադի կողմից հայտնաբերված թերությունները վերացվում են նրա պահանջմամբ անմիջապես։

15) Աշխատանքի ղեկավարը պարտավոր է տանել բրիգադի աշխատանքի ճիշտ հաշվառում ըստ բոլոր քանակական և վորական ցուցանիշների, վոչ պակաս 10 որը մեկ անգամ և հետևանքի մասին հայտնել բրիգադին վոչ ուշ, քան 10 որյակը անցնելուց 2 որ հետո։

16) Աշխատանքի ղեկավարը պարտավոր է բրի-

գադի կողմից կատարած աշխատանքի վերջնական չափումը և հաշվարկումը բոլոր ցուցանիշներով ներկայացնել բրիգադին վոչ ուշ հետևյալ ամսվա .....ից։

17) Աշխատանքի ղեկավարը պարտավոր է պարզատրել բրիգադին համաձայն տնտհաշվարկային բրիգադի մասին որենսդրության կանոնադրության հրահանգի և պայմանագրին կցված պարգևատրման աստիճանացույցի՝ նրա կողմից նյութերի ծախսման մեջ տնտեսում ձեռք բերելու դեպքում։

Աշխատանքի ղեկավարը պարտավոր է մինչև աշխատանքի անցնելը բացատրել բրիգադին բանվորական գծագրերը, նախագծերը և տալ բրիգադին բանվորական գծագրեր։ Սահմանել մշտական կոնսուլտացիա տեխնիկական հարցերի շուրջը։

18) Սույն տնտպայմանագրի մեջ փոփոխություններ կատարել կարելի յե կողմերից մեկի՝ աշխ. ղեկավարի, կամ բրիգադի ընդհանուր ժողովի հայտարարության դեպքում և նրա վերանայումը կատարվում է միատեղ։

19) Սույն պայմանագիրը կնքվում է մինչև տրվյալ բրիգադի կողմից աշխատանքի ավարտելու ժամկետով (ցույց տալ որյեկտները, աշխատանքի տեսակները) և այլն։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ԲՐԻԳԱԴԱ՝

30

ՀՀ Ազգային գրադարան
NL0977235

ԳԻՆԸ 50 ԿՊԳ.

1
3270